ԵՐԳԵՐ ԽԱԼԻԲԻ ՇՈՒՐՋԸ

Եկատերինե երկրորդ կայսրուհու 1779 թվականի 14-ը նոյեմբերի արտոնագրի համաձայն Նոր Նախիջևանի հայ հասարակությունը ուներ ազատ ինքնավարություն, որը կառավարում էր յուր օրենքներով ու սովորություններով։ Հայ հասարակության մեջ էին մտնում ինչպես քաղաքացիները, այնպես էլ գյուղացիք։ Հասարակության գլուխն էր կանգնած Հայկական Մագիստրատը, որը իր գոյությունը պահեց մինչև 1874 թվականը։

Անցյալ դարի երեսնական թվականներից մինչև 1870-ական թվականները հայ հասարակության կյանքի մեջ մեծ դեր է խաղացել Հարություն Խալիբյանը։ Նա չորս անգամ ընտրվել է քաղաքագլուխ։ Իր բազմաճյուղ առևտրական գործերով ավելի ազատ զբաղվելու համար նա մեջընդմեջ քաղաքագլուխ էր դարձնում իր ազգականներին ու բարեկամներին, որոնք հլու հպատակ կատարում էին նրա կամքը, ղեկավարը նա էր մնում։

Խալիբը շատ մեծ վաճառական էր և խոշոր կալվածատեր։ Նա ուներ առևտրական գրասենյակ Նոր Նախիջևանում, Տագանրոգում, Թեոդոսիայում և Կոստանդնուպոլսում։ Խոշոր եկամուտ էր ստանում նաև գյուղատնտեսությունից, նա ուներ չորս խոշոր ագարակ՝ զբաղվում էր ոչխարաբուծությամբ։

Խալիբը իր ժամանակվա ռեակցիայի պարագլուխներից մեկն էր։ Նա մաքուր մարդ չէր փողային հարցերի մեջ։ Չորս անգամ քաղաքագլուխ ընտրվելով հանդերձ, նա ոչ մի անգամ հաշիվ չի տվել հասարակությանը։ Նրա ամբողջ գործունեությունը հիմնված էր ապօրինության, կաշառակերության և այլ անիրավությունների վրա։ Ներսես Աշտարակեցու լիազորությամբ նա էր պահում եկեղեցական փողերը։ Տասնյակ տարիներ հաշվետու չլինելով ոչ ոքի առաջ սեփականացրել էր երկու հարյուր հազարից ավելի եկեղեցական գումար։ Այդ առաջ բերեց մեծ անբավականություն ժողովրդի մեջ, հասարակությունը բաժանվեց Խալիբյան և Հայրապետյան կուսակցություններ։ Վերջինիս հարում էր նաև Մ. Նալբանդյանը։

Մագիստրատի նիստերին մասնակցում էին և գյուղացոց ներկայացուցիչները։ Խալիբի ոտնձգությունների պատճառով գյուղացիները դադարեցին մասնակցել Մագիստրատի գործերին։

Շատ են եղել Խալիբին անիծող ժողովրդական երգերը. մեզ հասել է շատ քիչ բան։ Ահա մեզ հասած կտորները։

Ջալրմ մաշդ էր ան Բաբուգ աղան,
Մեր քաղաքի զալում գոլովան։
Դահա զոռբա էր առչևի գղան,
Աթլը խառաուլ կեղացի Ստյոփան։
Աղան գելլեր ժեք ծին լրձաձ,
Ստյոփան առչևեն չալ ծին հեձաձ,
Խալմուխ խամչին ժրվիլ-ժրվիլ,
Հալխը առչևը աիրիլ-տիրիլ։
Արիշի ձին գագղաձ յոռղա,
Ցանդաուլներ ֆրշթընա.
Աղան գեշթա առոք-փառոք,
Քովը նստած գնիգը դեսոք։
Աղան գեշթա խութուռները,
Տիմացը գելլին եսիրները,
Հեսաբ գառնե խրզմեթքյարեն
Ինչքան ձախիլ է նա ցորեն։
Հոդեն շիդագ տեբի Տայղան,
Կանտոռի կորձերը գընայի թամամ,
Անգից գելնե Խրիմի ջամփան,
Քեֆեի խութուռը գրհասնի համան։

Խալիբը ոչ մի հոգատարություն չի ունեցել քաղաքի զարգացման մասին. նրա օրով ոչ մի ուսումնարան չի բացվել, ոչ մի հասարակական շենք չի շինվել։ Սեփականացնելով եկեղեցական փողերը, նա շինեց Թեոդոսիայի Խալիբյան ուսումնարանը, որի գո-

յությունը եղավ շատ կարճատև։ Իր ընտանեկան կյանքում ևս նա մաքուր չէր և ոչ էլ բախտավոր։ Նա շատ սիրում էր թիկնապահ գյուղացի Ստեփանին, շատ հավանում էր նրան։ Ստեփանը քաջ երիտասարդ էր, նրա ձեռքով Խալիբը մտրակի շատ հարվածներ և «շամառներ» է հասցրել իր թշնամիներին։ Ստեփանը համարվում էր հավատարիմ ծառա։ Մտերիմ էր Խալիբի ընտանիքի անդամների հետ և սիրահարվեց աղայի մեծ աղջկան՝ Հոռոսմային։ Վերջինս սիրեց Ստեփանին, այդ մասին հայտնել հորը անկարելի էր, աղնվական Խալիբը երբեք իր աղջկան չէր տա մի աղքատ գյուղացու։ Նրանք գաղտնի փախան, պսակվեցին և գնացին Ղրիմ, ուր գյուղերից մեկում թաքնվեցին մի քանի տարի։ Խալիբը ոտքի հանեց ամբողջ ոստիկանությունը, մինչև իսկ զինվորական մասերը, շատ զայրացավ, բայց բան անել չկարողացավ։

Այս առթիվ եղել են շատ երգեր, թե քաղաքում և թե գյուղերում, բայց մեզ հասել են չնչին բեկորներ։

Աղան ուներ երգու ախչիդ,
Մեծը՝ Հոռոսմա, փոքրը՝ Նուրիգ,
Հոռոսման չորցած, Նուրիգը փչված,
Էրդուսն էլ անուս, անդեր մեծացած։
Հոռոսման թուքից ամոթին բերանը,
Խևի պես սիրեց նարա Ստեփանը.
Գիշերով փախան, փսագվեցան,
Շունի պոչթայով Խրիմ հասան։

Այս երգի շարունակությունը չհաջողվեց գտնել։ Այս զույգը ապրեց երկար և երջանիկ կյանքով Սուրբ Խաչ գյուղում, ուր և թաղվեցին մի գերեզմանափոսում։

Հոռոսմային է վերաբերվում և հետևյալ երգը։

Վերեն էգողը վով է,
Բաշմաքիները հով է,
Իրկան բոյեն գարճ է,
Խարիրգիթին հարճ է։
Հոռոսման էգավ ամառը,
Գերավ Խալիբին շամառը,
Նստավ շունի պոչտան,
Հասավ Խրիմի օշթան։

* * *

Շատ սրված էր Խալիբի և գյուղացոց հարաբերությունը։ Պատճառը անշուշտ հողային հարցն էր։ Այս հարցի պատմությունը շատ մեծ է և լուրջ։ Համառոտակի կասենք միայն հետևյալը։

Ռուսաց կառավարությունը «հայ հասարակությանը» տվել էր շուրջ 92.000 դեսյատին հող։ Հրովարտակում պարզ ասված էր, որ քաղաքին տրվում է 12.000 դեսյատին։ Խալիբի ձեռքով քաղաքի հողերի մեծությունը հասել էր 22.000 դեսյատինի։ 1801 թվականի հողաշինարարության ժամանակ Նովոռուսիայի երկրաչափական գրասենյակը հայկական գյուղերին հատկացրել էր 67.076 դեսյատին։ Մագիստրատի ձեռքով հայ հասարակության նվիրված հողերի վրա 1814 թվականին հիմնվեցին 25 սեփականատիրական ագարակներ. ստացան այդ հողերը քաղաքի հարուստ վաճառականները, Խալիբը այդ տեղերում ուներ երեք ագարակ (Головинский, Поповка, Камышевахский), շուրջ 2000 դեսյատին։ Խալիբի քաղաքագլխության ժամանակ շարունակվեց գյուղացիների հողերի հափշտակումը։ Աղաները իրար հետևից սկսեցին շինել գյուղացոց հողերի վրա նոր-նոր խուտորներ։ Զայրացած գյուղացիք սկսեցին քանդել և կրակի մատնել այդ նոր շենքերը։ Խալիբը կառավարությանը զեկուցեց, որ հայ գյուղացիները ապստամբել են, պետք է ճնշել, և խնդրեց ուղարկել պատժիչ ջոկատներ, որոնց գյուղացիք անվանեցին «կուցի սոլդաթներ» և մինչև օրս էլ հիշում են անեծքով։

Խալիբը ուներ ռուս ճորտեր. նա ուզում էր հայ գյուղացիներին ևս դարձնել ճորտեր, ղրկել նրանց հողերից և ստիպել, որ աշխատեն կալվածատերերի ագարակներում։ Նա այդ նպատակով դիմել էր և հայտնի գեներալ Մադաթովին, խնդրել նրան, որ օգնի այդ հարցի իրականացմանը։ Գյուղացիները քանի՞-քանի՞ փորձել են դիմել բարձր իշխանության և գանգատվել Խալիբի ապօրինի գործերի դեմ։ Խալիբի կարգադրությամբ գյուղական պատգամավորներին բռնում և պատժում էին։

Վերջի ի վերջո գյուղացիներին հաջողվեց գաղտնի ճանապարհներով Պետերբուրգ ուղարկել երեք պատգամավոր, Զալթիրից՝ Ղազար Էկիզյանին, Թոփտիից՝ Վարդերես Խաչիկյանին և Մեծ Սալայից՝ Կարապետ Դոմբայանին։ Նրանք մայրաքաղաքում դի-

մել էին Խաչատուր Լաղարյանին և նրա օգնությամբ 1848 թ. հուլիսի 22-ին պետական խորհուրդը վճռել է հայ գյուղերին հատկացնել 67.076 դեսյատին հող։

Պատգամավորները վերադարձել են այդ վճիռը ձեռքներին։ Այդ առիթ է տվել մեծ ուրախության, հորինել են երգ.

Ուրախություն մեզի համար.
Գարաբեգն ու Եղիազար,
Իժեքումն ալ Վաշդերես,
Հոն ալ եղան բարդերես։
Մալան ամոթեն հոն մնաց,
Սաղ ծմեռը հոս-հոն կնաց.
Մալան էգավ ամառը,
Գերավ Խալիբին շամառը։

Չնայած պետական խորհրդի կայսերահաստատ վճռին, չնայած նրան, որ այդ վճիռը չէր բեկանված, զավթիչները մնացին իրենց տեղը։ Այդպես ուժեղ էր Խալիբը։

Կաշառքը, խնամիությունը և շատ ստոր միջոցներ Խալիբի գործիքներն էին, նրա դեմ ոչ ոք չէր համարձակվի դուրս գալ։

Ժողովուրդը կնքել էր նրան «Խալիբ-սրզ» արհամարական մականունով, իսկ շառխրճիները,

Մուխը մարից կեղ ու քաղաքին,
Արունը ձրձից խարիբ-Ղազարին.

Խալիբի մասին շատ է գրված[1]։

ՍԵԿՈՒԵԹԱՌԻՆ ՊԻՌՈԳԸ

Նոր Նախիջևանի Մագիստրատի բոլոր պաշտոնյաները հայեր էին, ընդհանուր գործավարությունը, դատավարությունը կատարվում էր հայերեն, բայց կառավարության հետ կապը պահպանելու համար, ավելի շուտ հսկելու համար, կառավարությունը միշտ ուղարկում էր քարտուղար (սեկուեթառ), որը փաստացի իր ձեռքն էր պահում Մագիստրատի ամբողջ գործունեությունը։ Առհասարակ ուղարկում էին գրագետ, բայց պաշտոնանկ եղած մի հարբեցող անձնավորություն։ Այդ քարտուղարները ամենը անխտիր կաշառակերներ են եղել և սիրել միշտ հյուրասիրվել հայ հարուստների տներում։ Նրանք անվերադարձ փողեր են վերցրել հայերից, որոնք միշտ շողոքորթելով պետական պաշտոնյաների առաջ, ուրախությամբ տվել են։

Այդպիսի քարտուղարներից (սեկուեթառներից) մեկը՝ Խալիբի քաղաքագլխության տարիներին որոշել է ինքը ևս հայերից վերցրած փողերով հյուրասիրել նրանց։ Բարիկենդանի օրերին նա իր տունն է հրավիրել քաղաքի աղաներին, «պիռոգ» և «բլինի» ուտելու։

Նախօրոք Դոնի ափից բերել են մի ընդարձակ նավակ, դրել երկու զույգ սահնակների վրա, զարդարել գորգերով, գույնզգույն թղթերով, դրոշակներով և մի ծայրում նստացրել նվագախումբ։

Երբ որ հայերը ուտում են ռուսական «պիռոգը» և «բլինին», խմում ռուսական օղին ու հայկական գինին, սկսում են պարել և ուրախանալ։ Հանկարծ հյուրերի համար անսպասելի կերպով տան դռան առաջ կանգնում է զարդարված նավակը իր նվագախմբով։ «Սեկուեթառը» ամենքին տալիս է մի-մի դիմակ և առաջարկում նստել նավ և ճանապարհորդել քաղաքի փողոցներով։ Երբ զույգ եզները քաշում են սահնակների վրա դրված նավակը, նվագախումբը նվագում է քեֆի եղանակներ։ «Սեկուեթառը» զարմացնում է քաղաքը իր «սրամիտ» հնարքով։ Այդ առթիվ հորինված է հետևյալ երգը։

Պարիգենթանին գիրագին,
Սեկուեթառին պիռոդին
Քեմեչեն ձեռքը Թիրաքին
Համը նայեցավ քաղաքին։
Աս քաղաքը ձով գիդիս,
Խայրխներով գրքալիս,
Էքի չանա, դերա էկյուզ,
Խախոլ Վասիլ ռեյուզ,
Դռանբացուքի դիբոնչի
Թայֆալարը յաղրջի,
Սաղ քաղաքը բդուդ էգան,
Մասխարա էղած դուն էգան։

---

1 Գ. Պատկանյան, Նոր Նախիջևանի պատմությունը, Նոր Նախիջևան, 1917 թ., էջ 96 և հետևյալները։

Աշոտ Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, II հատոր, Երևան, 1956, էջ՝ 161—163, 168—174 և հետևյալ էջերում։

Խ. Փորֆշեյան, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմությունից, Հայկ. ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», № 10, 1957։